Հայտարարություն
«Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացվող «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ-ի Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական և տարրական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի շրջանակներում դասախոսական անձնակազմի քանակական հետազոտական կարողությունների զարգացման նպատակով վերապատրաստման մոդուլների մշակում և վերապատրաստումների իրականացման նպատակով խորհրդատուի ընտրության մրցույթի

<<20>> հուլիսի 2018թ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, այսուհետ՝ ՀՊՄՀ, «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացնում է «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի նպատակը ՀՊՄՀ-ում ժամանակակից կրթական մարտահրավերներին համապատասխան նորարարական գործնական ու հետազոտական հմտություններով և կարողություններով հարուստ մասնագետների պատրաստումն է նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Սկզբնական կրթության ֆակուլտետի դասախոսական անձնակազմի քանակական հետազոտական հմտությունների զարգացմանն ուղղված ТОТ (վերապատրաստողների վերապատրաստող) վերապատրաստումներ: Ծրագրի իրականացման հաջողության գրավականը մեծապես պայմանավորված է վերապատրաստման իրականացման հետ, որը և իր տեղն է գտել ծրագրի գործողությունների շարքում:

Խորհրդատուն աշխատանքները կիրականացնի երկու փուլով. 1-ին փուլ՝ 3 ամիս և 2-րդ՝ 1 ամիս տևողությամբ՝ աշխատանքները կմեկնարկվեն օգոստոս ամսին:

Անհատ խորհրդատուի կողմից իրականացվելիք գործողությունների շրջանակը հետևյալն է.

Ծառայությունների մատուցումը նախատեսվում է իրականացնել 1 անհատ խորհրդատուի ներգրավմամբ, ով հաշվետու ժամանակահատվածում կիրականացնի ներքոնշյալ աշխատանքները:

Անհատ խորհրդատուի կողմից իրականացվելիք գործողությունների շրջանակը հետևյալն է.

- Քանակական հետազոտական հմտությունների զարգացմանն ուղղված ТОТ (վերապատրաստողների վերապատրաստող) վերապատրաստումների մոդուլների մշակում, որոնց շրջանակներում պետք է ներառված լինեն հետևյալ բաղադրիչները.

    - Մատչելի ձևով ներկայացնել նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, տարրական մանկավարժության և մեթոդիկայի մասնագիտություններին առնչվող հետազոտական հարցի ձևավորման առանձնահատկությունները, քանակական հետազոտական մեթոդաբանությունն ու վերջինիս ընտրության սկզբունքները
    - Նախապատրաստել հետազոտական հմտությունների զարգացման բաղադրիչների նախնական գիտելիքների գնահատման և վերապատրաստումներից հետո իրականացվող վերջնական գնահատման թեստեր
    - Ներառել և քննարկել քանակական հետազոտական բաղադրիչի ուսումնառության վերջնարդյունքների ապահովման համար նախատեսված ընթացիկ և ամփոփիչ գնահատման ձևերը և մեթոդները
    - Կազմել վերապատրաստումների օրակարգն ու ժամանակացույցը
- Վերապատրաստման մշակված մոդուլների և այլ փաստաթղթերի ներկայացում և քննարկում դրամաշնորհային ծրագրի թիմի և բուհի այլ ներկայացուցիչների հետ
- Ստացված դիտողությունների և նկատառումների հիման վրա վերապատրաստման մոդուլների և այլ փաստաթղթերի լրամշակում ըստ անհրաժեշտության
- Մշակված մոդուլների և ժամանակացույցի համաձայն քանակական հետազոտական հմտությունների զարգացմանն ուղղված TOT (վերապատրաստողների վերապատրաստող) վերապատրաստումների կազմակերպում և իրականացում (ըստ ծրագրի առնվազն 10 դասախոս՝ հետազոտական կարողությունների բարելավման նպատակով) , մեկ ամիս տևողությամբ, այդ թվում
    - Հանգամանալից ներկայացնելով տեղեկատվության հավաքագրման և վերլուծության քանակական մեթոդները՝ համահունչ ընտրված մեթոդաբանությանը
    - Համառոտ ներկայացնելով քանակական գիտական հետազոտության ակադեմիական գրելաոճի մոտեցումները և միջազգային բարձր վարկանիշավորում ունեցող հանդեսներում հրապարակման չափանիշները
    - Յուրաքանչյուր դասընթացի համար ներառելով արդի գրականության ցանկ և այլ տեղեկատվական աղբյուրներ, որոնք անդրադառնում են ժամանակակից քանակական հետազոտությունների մեթոդաբանությանը և կիրառությանը
    - Վերապատրաստվողներին ծանոթացնելով կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող քանակական հետազոտական աշխատանքների տեսակները
- Իրականացված վերապատրաստման արդյունքներով հաշվետվության պատրաստում և ներկայացում՝ ըստ անհրաժեշտության ներառելով նաև գործընթացի բարելավման ուղղությամբ առաջարկություններ:

Ակնկալվող արդյունքները

Խորհրդատվական ծառայության մատուցման արդյունքն է.

- Վերապատրաստման նյութերի, մոդուլների առկայություն
- Վերապատրաստված դասախոսական կազմ (առնվազն 10 դասախոս)

Խորհրդատուի աշխատանքները համակարգում է ՆՄՀ «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի համակարգողը, իսկ հաշվետվությունները հաստատում՝ նույն Ծրագրի ղեկավարը:

Նվազագույն որակավորման պահանջներն են.

Նշված ծառայության իրականացման համար պահանջվում են անհատ խորհրդատուին ներկայացվող հետևյալ նվազագույն որակավորման պահանջներն ու գնահատման չափանիշները.

- Բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում, մանկավարժության կրթության կառավարման, և/կամ կրթության ոլորտում որակավորումը կդիտվի առավելություն
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ բարձրագույն կրթության ոլորտում, (բարձրագույն կրթության հետազոտության ոլորտում փորձը կդիտվի իբրև առավելություն),
- Կրթական ծրագրերի, կրթական ծրագրերի բաղադրիչների, գնահատման ձևերի, ինչպես նաև դասավանդման մեթոդաբանության մշակման ուղղությամբ փորձը ցանկալի է
- Տարրական մանկավարժության և մեթոդիկայի իմացություն,
- Փորձը միջազգային բարձրագույն ուսումնական հաստատություններում, հետազոտական և կրթական այլ հաստատություններում կարճատև կամ երկարատև հետազոտության փորձը ցանկալի է
- Վերապատրաստման մոդուլների մշակման և վերապատրաստումների իրականացման փորձ
- Օտար լեզվի (անգլերեն կամ ռուսերեն) իմացությունը պարտադիր է
- Հետազոտության ընթացքում հավաքագրված տեղեկատվության քանակական (օրինակ՝ Excel, SPSS) վերլուծության համար համակարգչով աշխատելու և համապատասխան ծրագրերը կիրառելու հմտություններ

Գնահատման չափանիշներ

Խորհրդատուի ընտրությունը իրականացվելու է Ընտրության հանձնաժողովի կողմից ըստ հետևյալ գնահատման չափանիշների.

Չափանիշը	Առավելագույն միավորը
Որակավորում՝ - Բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում, մանկավարժության կրթության կառավարման, և/կամ կրթության ոլորտում որակավորումը կդիտվի առավելություն - Օտար լեզվի (անգլերեն կամ ռուսերեն) իմացությունը պարտադիր է - Հետազոտության ընթացքում հավաքագրված տեղեկատվության քանակական (օրինակ՝ Excel, SPSS) վերլուծության համար համակարգչով աշխատելու և համապատասխան ծրագրերը կիրառելու	30

հմտություններ	
Ընդհանուր փորձառություն և հմտություններ՝ - Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ բարձրագույն կրթության ոլորտում, (բարձրագույն կրթության հետազոտության ոլորտում փորձը կդիտվի իբրև առավելություն),	30
Հատուկ փորձառություն՝ - Կրթական ծրագրերի, կրթական ծրագրերի բաղադրիչների, գնահատման ձևերի, ինչպես նաև դասավանդման մեթոդաբանության մշակման ուղղությամբ փորձը ցանկալի է - Տարրական մանկավարժության և մեթոդիկային իմացություն - Միջազգային բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթական և կարճատև կամ երկարատև հետազոտության փորձը ցանկալի է - Վերապատրաստման մոդուլների մշակման և վերապատրաստումների իրականացման փորձ	40

Դիմող թեկնածուները դիմումին կից (դիմումի ձևը կցվում է) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը, աշխատանքների ցանկը:
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Ամբողջ ծրագիրը պետք է իրականացնել 4 ամսվա ընթացքում՝ երկու փուլով:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել աշխատանքային օրերին Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամ՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17, 214 սենյակ հասցեով, կամ էլ. փոստով (davidmeliqsetyan@mail.ru) մինչև ս.թ. հուլիսի 30-ը ժամը 17:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ 010-597082 հեռախոսահամարով:

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամ
Տիգրան Մեծի 17, 214 սենյակ

Դիմող՝ *(անուն ազգանուն)*
հասցե՝(…… ……..)
հեռախոս՝ (…….)
Էլ. փոստ՝ (……..)

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում **ՀՊՄՀ-ի Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական և տարրական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի շրջանակներում դասախոսական անձնակազմի քանակական հետազոտական կարողությունների զարգացման նպատակով վերապատրաստման մոդուլների մշակում և վերապատրաստումների** իրականացման նպատակով խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ *(անուն, ազգանուն)*

<<…>> ……..... 2018թ.